ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ՄԵՐԻ ՆԱՋԱՐՅԱՆ
Հայաստանի ազգային ագրարային համալսարան
Պատմ. գիտ. թեկն.
meri.nadzharyan@mail.ru

ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ԳՈՐԾՈՆԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆ-ԹՈՒՐՔԻԱ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՀԱՐՑՈՒՄ

Բանալի բառեր և արտահայտություններ. Հայաստան, Թուրքիա, Լեռնային Ղարաբաղ, ազդեցություն, հարաբերություն, համագործակցություն, ռազմավարություն, դիվանագիտություն, գործոն:

Ключевые слова и выражения: Армения, Турция, Нагорный Карабах, влияние, отношения, сотрудничество, стратегия, дипломатия, фактор.

Key words and expressions: Armenia, Turkey, Nagorno Karabakh, impact, relation, cooperation, strategy, diplomacy, factor.

Հայաստան-Թուրքիա հարաբերություններն ընդհանրապես և հայ-թուրքական հարաբերությունների ներկայիս իրավիճակը մասնավորապես՝ որպես Հայաստանի Հանրապետության (ՀՀ) առջև ծառացած լրջագույն մարտահրավեր, եղել և մնում է հայ պատմագիտության հրատապ և կարևոր հիմնախնդիրներից: Ներկայումս հայ-թուրքական հարաբերությունների կարգավորումը առաջնահերթ կարևորություն ունի թե՛ տարածաշրջանային անվտանգության ու կայունության, թե՛ Լեռնային Ղարաբաղի (ԼՂ) հակամարտության կարգավորման տեսակետից: Քանզի հարկ է չմոռանալ, որ ՀՀ ազգային անվտանգության ռազմավարության մեջ որպես արտաքին սպառնալիք նշված է, որ «Ադրբեջանի Հանրապետության կողմից ՀՀ և ԼՂ հանրապետության հանդեպ զինված ուժի կիրառման բացահայտ սպառնալիքների պարագայում՝ Թուրքիայի Հանրապետությունը, լինելով

Ադրբեջանի ռազմավարական դաշնակիցը, նույնպես կարող է սպառնալիք ստեղծել»[1]:

Հայաստանի և Թուրքիայի միջև դիվանագիտական հարաբերությունների հաստատման նպատակով իրականացված երկկողմ բանակցությունների, դրանցում առկա հիմնախնդիրների և կողմերի սկզբունքային մոտեցումների, ինչպես նաև հայ-թուրքական հարաբերությունների հաստատման վրա ժամանակի քաղաքական զարգացումների համատեքստում տարբեր գործոնների ազդեցությանը վերաբերող հարցերն լայնորեն ուսումնասիրված և լուսաբանված են գիտահետազոտական գրականության մեջ: Այդուհանդերձ, քանի դեռ երկու երկրների միջև չեն հաստատվել դիվանագիտական հարաբերություններ և սահմանը շարունակում է մնալ փակ, առկա և հնարավոր դժվարությունները հասկանալու համար չպետք է խնայել ոչ մի ջանք: Հատկապես, վերջին շրջանում կատարված իրադարձությունները՝ Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի համահայկական հռչակագրի ընդունումը[2], փետրվարի 16-ին նախագահ Սերժ Սարգսյանի կողմից հայ-թուրքական արձանագրությունները ԱԺ-ից հետ կանչելը[3] և դրանց հաջորդած թուրքական արձագանքները ևս մեկ անգամ օրակարգային են դարձնում հայ-թուրքական հարաբերությունների հետնախորքին, ներկային ու հեռանկարներին անդրադառնալը: Եվ թերևս միայն իրադարձությունների քննական վերլուծությունը հնարավորություն կտա հնարավորինս ճիշտ կողմնորոշվել հայ-թուրքական հարաբերությունների հեռանկարի հարցում և ռեալ գնահատել հայ-թուրքական հարաբերությունների զարգացման հարցում առկա հնարավոր ռիսկերն ու դրական կողմերը:

Անկախության հռչակումից ի վեր, ՀՀ ղեկավարությունը Թուրքիայի հետ առանց նախապայմանների դիվանագիտական հարաբերությունների հաստատումը դիտարկում է որպես ՀՀ արտաքին քաղաքական առաջնահերթություններից մեկը: Մինչդեռ Թուրքիան վարում էր երկակի խաղ. մի կողմից առաջիններից մեկը ճանաչելով ՀՀ անկախությունը,

---

[1] Տե՛ս «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարություն», «Հայկական բանակ» ռազմագիտական հանդեսի հատուկ թողարկում, 2007, էջ 18:

[2] ՀՅԹԻ գիտական ֆոնդեր, բաժին 57, թպ. 37, ֆ. հ. 886:

[3] Նախագահը մասնակցել է Մյունխենի անվտանգության համաժողովին, 17. 02. 2018, http://www.president.am/hy/press-release/item/2018/02/17/President-Serzh-Sargsyan-attended-Munich-security-conference/

այնուամենայնիվ, վերջինիս հետ դիվանագիտական հարաբերությունների հաստատումը ձգձգում էր առաջադրելով որոշակի նախապայմաններ, որոնց բովանդակությունը հանգում էր հետևյալին. **1.** չհիշատակել 1915 թվականի Հայոց ցեղասպանությունը և պաշտոնապես հրաժարվել՝ պահանջատիրությունից, **2.** ճնշում գործադրել Լեռնային Ղարաբաղի վրա՝ դադարեցնելու պայքարը և ընդունելու Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը[4]: Բացի այդ, Թուրքիան Հայաստանից երաշխիքներ էր պահանջում, որ «Հայաստանը զերծ կմնա Թուրքիայի շահերին հակասող գործողություններից և **ամեն կերպ կչեզոքացնի հայկական լոբբիի «հակաթուրքական» գործունեությունը Սփյուռքում»** (ընդգծումը մերն է- Մ.Ն.)[5]: Մյուս կողմից հստակ գիտակցելով, որ ՀՀ անկախության հռչակումից ի վեր Հայաստան-Թուրքիա հարաբերություններն զուտ երկու երկրների միջև հարաբերություններ լինելուց զատ ներքաշվել էին նաև տարածաշրջանում խոշոր տերությունների քաղաքական հետաքրքրությունների ոլորտ, չնայած հարաբերությունների կարգավորման գործում որդեգրած բացասական դիրքորոշմանը շարունակում էր բանակցությունները հայկական կողմի հետ՝ ստեղծելով պատրանք, թե իբր ինքը դեմ չէ ՀՀ-ի հետ հարաբերությունների կարգավորմանը: Այսինքն՝ արդեն այդ շրջանից Թուրքիայի համար Հայաստանի հետ բարիդրացիական հարաբերությունները դիտվում էին ոչ որպես արտաքին քաղաքական նպատակ, այլ ավելի շատ միջոց տարածաշրջանային գերազանցությունը Ռուսաստանից խլելու և «թուրքական մոդելը» դեպի հետխորհրդային արևելք արտահանելու համար[6]: Ընդ որում հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման վրա որոշակի ազդեցություն ունեցող գործոնների առումով կարևորվում է այն հանգամանքը, որ եթե տնտեսական գործոնը երկուստեք շահավետ էր[7],

---

[4] Տե՛ս Հովհաննիսյան Ն., «Մերձավորարևելյան տարածաշրջանը և Հայաստանի ազգային անվտանգության խնդիրը», // «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ ու ժողովուրդներ», թիվ 16, Եր., 1996, էջ 14:

[5] Տե՛ս Չաքրյան Հ., Ղարաբաղյան հիմնահարցը հայ-թուրքական հարաբերությունների համատեքստում, Եր., 1998, էջ 15:

[6] Տես Հայ-թուրքական հարաբերությունների ներկան, «Հայաստանի Հանրապետություն», Եր., 2015, 3 մարտի, http://www.hhpress.am/?sub=hodv&hodv=20150303_3&flag=am&fbclid=IwAR3jFpC9uMeEkAryVIdJz1Cn7-pizvSDDhP6oDuy33x5ohBj-YhE-hW4rO8

[7] Տե՛ս Նաջարյան Մ., Տնտեսական գործոնի դերը հայ-թուրքական հարաբերություններում 1991-1997 թթ., // «Ակունք», Գիտական հոդվածների ժողովածու, թիվ 2 (18), Եր., 2018, էջ 33-40:

ապա ԼՂ հակամարտության կարգավորման հարցում կողմերի տեսակետները տրամագծորեն հակադիր էին: Գաղտնիք չէ, որ հարևան Թուրքիան հենց սկզբից էլ որդեգրելով ընդգծված ադրբեջանամետ դիրքորոշում ղարաբաղյան հակամարտության կարգավորման հարցում, ԼՂ հիմնահարցը դիտարկում է որպես կարևոր քաղաքական գործոն հայ-թուրքական հարաբերություններում: Նման պարագայում էլ Թուրքիան սկսում է Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը ՀՀ-ի կողմից հարգելու պահանջը դիտարկել որպես կարևոր նախապայման՝ ՀՀ-ի հետ հարաբերությունները կարգավորելու հարցում:

Ստացվում է, որ անգամ այն դեպքում, երբ ՀՀ ղեկավարությունը պատրաստակամություն էր հայտնել երկկողմ հարաբերություններում Հայոց ցեղասպանության խնդիրը չարծարծել, ավելին, ՀՀ նախագահ Լ. Տեր-Պետրոսյանը դեմ չէր նույնիսկ 1992-1993 թթ. ղարաբաղյան բանակցություններում Անկարայի ներգրավմանը[8]՝ Թուրքիան, խախտելով միջազգային իրավունքի բոլոր հիմնարար սկզբունքները, այնքան էլ դեմ չէր հենց ռազմական ճանապարհով հարթել Հայաստանի հետ բոլոր խնդիրները: Եվ չնայած Հայաստանի կողմից Թուրքիային ուղղված հստակ ազդանշաններին՝ վերջինս հենց սկզբից էլ ներգրավվեց ղարաբաղյան հակամարտության մեջ՝ Ադրբեջանին ցուցաբերելով քաղաքական, ռազմաֆինանսական և դիվանագիտական աջակցություն: Ուստի մեկ անգամ ևս ուզում ենք շեշտել, որ քննադատության չեն դիմանում ՀՀ ղեկավարության այն պնդումները, թե իբր Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման հարցը ՀՀ արտաքին քաղաքականության օրակարգից հանելը բավարար է Հայաստանի անվտանգությունն ապահովելու համար[9]: Թուրքիան հետևողականորեն ներքաշվեց և հայ-թուրքական առանց այդ էլ բարդ հարաբերությունների բաղկացուցիչ դարձրեց Արցախյան հիմնահարցը: Եվ որքան էլ 1992 թ. հունիսի 23-26-ը Սևծովյան տնտեսական համագործակցության կազմակերպության աշխատանքների շրջանակում ՀՀ նախագահ Լ. Տեր-Պետրոսյանը մտահոգությունն է հայտնում, որ Հայաստան-Թուրքիա հարաբերությունները չպետք է կախված լինեն հայ-ադրբեջանական

[8] Հակոբյան Թ., Թուրքիան ղարաբաղյան բանակցություններում ներգրավված է եղել 1992-1993 թթ, 16.10.2016, https://www.civilnet.am/news/2016/08/16/թուրքիան-ղարաբաղյան-բանակցություններ/298842?fbclid=IwAR0jFFS8eoC1NfCPyxleCIPWw4Y6nv0fVM05l5ozDEsItFrKKVKA8RFVT1M

[9] Տե՛ս ՀՅԹԻ գիտական ֆոնդեր, բաժին 32, թպ. 26, ֆ. հ. 88, էջ 1:

հարաբերություններից, այնուամենայնիվ Դեմիրելը, կիսելով Լ. Տեր-Պետրոսյանի մտահոգությունը այն համոզմունքն է հայտնում, որ «…երկու երկրների միջև (Հայաստան-Թուրքիա-Մ.Ն.) դիվանագիտական հարաբերությունների հաստատմանը խոչընդոտող միակ հանգամանքը շարունակվող զինված ընդհարումներն են»[10]: Դժվար չէ նկատել, որ այստեղ Դեմիրելը ի պատասխան Լ. Տեր-Պետրոսյանի նշված մտահոգությանը շարունակում է պնդել, որ ՀՀ-ի հետ դիվանագիտական հարաբերությունների հաստատման հարցում ղարաբաղյան գործոնը շարունակում է մնալ որպես Թուրքիայի կողմից առաջադրվող կարևոր նախապայման: Բացի այդ, Ս. Դեմիրելն առաջարկում է երկկողմ հանդիպում կազմակերպել Ադրբեջանի և Հայաստանի նախագահների միջև, սակայն Ադրբեջանի ղեկավար Ա. Էլչիբեյը, ով դեռևս հույս ուներ ղարաբաղյան հակամարտությունը լուծել ռազմական ճանապարհով, հրաժարվում է հանդիպումից[11]:

Նշված քայլով Ս. Դեմիրելը, փաստորեն, փորձում էր հանդես գալ որպես միջնորդ ղարաբաղյան հակամարտության կարգավորման գործում՝ անտեսելով Թուրքիայի կողմնակալ դիրքորոշումն այս հարցում: Նշենք նաև, որ Դեմիրելի կողմից ղարաբաղյան հակամարտության կարգավորման հարցում որպես միջնորդ հանդես գալու առաջարկ էր արվել նաև դեռ 1992 թ. հունվարին, երբ Թուրքիայի վարչապետը «32-րդ օր» հեռուստահաղորդման ժամանակ շեշտել էր, որ «Թուրքիան մեծապես կնպաստի հայ-ադրբեջանական հակամարտության կարգավորմանը, միայն թե ՀՀ-ն ու Ադրբեջանը շարունակեն վստահել նրան»[12]:

Քանի որ վերևում խոսք գնաց հայ-թուրքական հարաբերություններում ղարաբաղյան գործոնի մասին, ուստի, խնդիրն առավել ամբողջական ներկայացնելու նպատակով, ցանկանում ենք անդրադարձ կատարել նաև հետևյալ փաստերին:

Այսպես, 1992 թ. սեպտեմբերի վերջին ՀՀ նախագահ Լ. Տեր-Պետրոսյանի և Թուրքիայի ԱԳ նախարար Հ. Չեթինի ԱՄՆ-ում կայացած հանդիպման ընթացքում, կրկին առաջնահերթ է եղել Ադրբեջանի գործոնը: Թուրքական կողմը, մասնավորապես, պահանջել է հայերից զինված ուժերը

---

[10] ՀԱԱ, ֆ. 326, ց. 9, գ. 70, թ. 11:

[11] Տե՛ս Куртов А. А., Халмухамедов А. М., Армения-Турция: Противостояние или Сотрудничество ? “Армения: Проблемы независимого развития”, Москва, 1998, стр. 450-451:

[12] Տե՛ս «Azg», Եր., 1992, թ. 10, 12 փետրվարի:

դուրս բերել Ադրբեջանի տարածքից, իսկ Ղարաբաղի քաղաքական կարգավիճակը քննարկել Մինսկի հանդիպման ժամանակ[13]:

Հարկ է նշել, որ Թուրքիայի մոտեցումները ՀՀ-ի հետ հարաբերությունները կարգավորելու հարցում մեծապես պայմանավորված էին նաև ԼՂ-ում հայկական զինված ուժերի ձեռքբերումներից, քանզի փաստերը ցույց են տալիս, որ որքան ավելի ակնառու էին դրանք, այնքան ավելի էր կոշտանում Թուրքիայի դիրքորոշումը ՀՀ նկատմամբ: Որպես ասվածի ապացույց, ցանկանում ենք նշել հենց թեկուզ այն փաստը, որ 1993 թ. մայիսին արձագանքելով դեռևս ապրիլ ամսին հայկական զինված ուժերի կողմից Քարվաճառի ազատագրմանը, Թուրքիայի նախագահ Թուրգութ Օզալը ցինիկաբար հայտարարում էր, թե «հայերը չեն սովորել Անատոլիայի փորձառության իրենց դասը և այն պատիժը, որ ստացել են»[14]: Ավելին, չբավարարվելով զուտ հայտարարությամբ, Թուրքիան դիմում է նաև գործնական քայլերի՝ արգելում «իր օդային տարածքով դեպի ՀՀ գնացող օդանավերի թռիչքները, փակում Գյումրի-Կարս երկաթգիծը, ինչպես նաև արգելում իր տարածքով մարդասիրական օգնության առաքումը ՀՀ»[15] և որպես երկկողմ հարաբերությունների բարելավման նախապայման ավելացնում «նաև Հայաստանի կողմից ազատագրված տարածքների հանձնումը Ադրբեջանին»[16]: Ուստի, կարծում ենք սխալված չենք լինի, եթե նշենք, որ քննարկվող ժամանակաշրջանում Թուրքիայի նման մոտեցումը ՀՀ-ի հետ հարաբերությունները կարգավորելու հարցում լուրջ սպառնալիք էր մեր ազգային անվտանգությանը:

Այն, որ թուրքական իշխանությունները ՀՀ-ի հետ հարաբերությունների բարելավումը մեծապես պայմանավորում էին նաև ղարաբաղյան հիմնախնդրով ակնառու է դառնում նաև հետագայում: Այսպես, արդեն 1995 թ. փետրվարի 21-ին «Անվտանգությունը, կայունությունը, բարգավաճումը և անկախությունը Հարավային Կովկասի տարածաշրջանում» միջազգային գիտական կոնֆերանսին մասնակցելու

---

[13] ՀԱԱ, ֆ. 326, ց. 9, գ. 44, թ. 11-12; նաև՝ «Hürriyet», Istanbul, 1992, 26 Eylül.

[14] Տե՛ս Հովհաննիսյան Ն., «Մերձավորարևելյան տարածաշրջանը և Հայաստանի ազգային անվտանգության խնդիրը», // «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ ու ժողովուրդներ», թիվ 16, էջ 16:

[15] Տե՛ս Հայաստան-Թուրքիա. Բաց երկխոսություն, Հասարակական երկխոսության և զարգացումների կենտրոն, Եր., 2005, էջ 109:

[16] Տե՛ս Արցախյան հակամարտությունը հայ-թուրքական հարաբերությունների համատեքստում, 19. 03. 2015, http://times.am/?p=118109&l=am/arcaxyan+hakamartutyuny+hay-turqakan+haraberutyuneri+hamateqstum

նպատակով Անկարայում գտնվող Հայաստանի նախագահի գլխավոր խորհրդական, հատուկ հանձնարարությունների գծով դեսպան Ժ. Լիպարիտյանի գլխավորությամբ հայկական պատվիրակության անդամների և Թուրքիայի նախագահ Ս. Դեմիրելի հետ կայացած հանդիպման ընթացքում վերջինս կրկին անգամ որպես հայ-թուրքական հարաբերությունների բարելավման նախապայման առաջ է քաշում «գրավված ադրբեջանական տարածքներից և Շուշի քաղաքից հայերի հետ քաշման խնդիրը»[17]:

Նույն նախապայմանը Ս. Դեմիրելն առաջ է քաշում նաև 1995 թ. մարտին՝ Կոպենհագենում ՄԱԿ-ի կողմից կազմակերպված «Սոցիալական զարգացումների և հիմնախնդիրների» գագաթնաժողովի շրջանակում ՀՀ նախագահ Լ. Տեր-Պետրոսյանի հետ հանդիպման ժամանակ, նշելով, որ «ի՞նչ վատ կլինի, եթե նավթամուղն անցնի ձեր երկրով: Լուծեք ձեր խնդիրներն Ադրբեջանի հետ: Դրանք վնաս են հասցնում մեզ»[18]:

Ելնելով վերը նշվածից կարծում ենք սխալված չենք լինի, եթե նշենք, որ սկսած 1992 թվականի սկզբներից Լեռնային Ղարաբաղի հիմնահարցը նախապես համաձայնեցված լինելով Ադրբեջանի հետ, Թուրքիայի կողմից սկսում է դիտարկվել որպես կարևոր քաղաքական գործոն և նախապայման ՀՀ-ի հետ հարաբերությունների կարգավորման հարցում:

Այլ կերպ ասած, թուրքական կողմը միակողմանիորեն փակելով ՀՀ-ի հետ սահմանը և ՀՀ-ի հետ դիվանագիտական հարաբերությունների հաստատման հարցում առաջադրելով նախապայմաններ, այդ թվում և ղարաբաղյան հարցի սեփական պատկերացմամբ «արդարացի լուծման» նախապայմանը՝ այդ կերպ փորձում է հասնել իր համար ցանկալի արդյունքի: Եվ տարածում ստացած պնդմանը[19], որ Ադրբեջանն է խոչընդոտում Թուրքիային Հայաստանի հետ դիվանագիտական հարաբերություններ հաստատելու հարցում, ցանկանում ենք նշել, որ ա՛յո հանուն արդարության պետք է նշել, որ մի գուցե Ադրբեջանը որոշ

---

[17] Տե՛ս Արշակյան Գ., Թուրքիայի քաղաքականությունը Հարավային Կովկասում 1991-2001 թթ., Եր., 2009, էջ 77:

[18] Տե՛ս նույն տեղում:

[19] Տեր-Մաթևոսյան Վ., Հայ-թուրքական հարաբերությունները մեթոդաբանական վերանայման ու աշխարհաքաղաքական անտարբերության խաչմերուկում, 29. 06. 2017, http://repairfuture.net/index.php/hy/geopolitics-standpoint-of-armenia-ar/armenian-turkish-relations-at-the-crossroads-of-methodological-revision-and-geopolitical-negligence-armenian

հարցերում Թուրքիային «պատանդ է վերցրել», սակայն ընդհանուր առմամբ Թուրքիան սեփական արտաքին քաղաքականության հարցում փորձում էր հնարավորինս չառաջնորդվել երրորդ պետության՝ տվյալ դեպքում Ադրբեջանի ցանկությամբ: Պարզապես հաշվի առնելով Հայկական գործոնի և ԼՂՀ-ի արգելափակող, ռազմաքաղաքական նշանակությունը պանթյուրքիստական ծրագրերի իրագործման և Թուրքիա-Ադրբեջան-Միջին Ասիա ծավալման ճանապարհին, Թուրքիան և Ադրբեջանը ԼՂ հիմնահարցն ընկալում են որպես առաջնային սպառնալիք: ԼՂ հակամարտության հարցում փորձ է արվում Հայկական գործոնը դիտարկել որպես թուրք-ադրբեջանական հարաբերությունների բնույթը պայմանավորող առանձնահատուկ խնդիր՝ Լեռնային Ղարաբաղի վրա վերահսկողություն սահմանելու ճանապարհով Հայկական գործոնը վերջնականապես չեզոքացնելու համատեքստում: Այս աշխարհաքաղաքական ծիրում են քննարկվում Թուրքիայի կողմից ի նպաստ Ադրբեջանի և ընդդեմ Հայաստանի ձեռնարկված դիվանագիտական, տնտեսական և այլ կարգի քայլերը:

Եվ թերևս սա էր պատճառներից մեկը, որ Թուրքիան ղարաբաղյան գործոնը օգտագործեց և օգտագործում է որպես խաղաքարտ, ավելին միջազգային ատյաններում իր դաշնակից Ադրբեջանի հետ նույն դիրքորոշմամբ է հանդես գալիս ԼՂ հակամարտության կարգավորման խնդրում: Թուրքիան, որն իր պատճառներն ուներ Արցախյան հակամարտության մեջ չներգրավվելու և Հայաստանի դեմ ռազմական գործողություններ սկսելու համար, Հայաստանի հետ հարցերը փորձում է լուծել Ադրբեջանի ձեռքերով: Այլ կերպ ասած նա խուսափում էր իր անունը մրոտելուց, բայց նաև հաշվեհարդար է տեսնում Հայաստանի հետ: Թուրքիան դեմ էր Ղարաբաղի միացմանը Հայաստանին այն պատճառով, որ Հայաստանը իր ոտքերի վրա ամուր չկանգնի, քանզի նրանց պետք էր թույլ Հայաստան: Ուստի կարելի էր ասել, որ նրանց կողմից առաջ քաշված «մեկ ազգ երկու պետություն» կարգախոսը գործում էր միայն հայատյացության պարագայում:

Ուստի ինչպես իրավացիորեն նկատել է թուրք լրագրող Սեդաթ Էրգինը Թուրքիան «Հայաստանի հետ բարիդրացիական հարաբերություններ հաստատելու կարիքը»[20] չուներ: Եվ, լիովին ընդունելի է Հ. Չաքրյանի այն տեսակետը, որ Թուրքիան Հայաստանին առաջադրված նախապայմաններով «փորձում էր Հայաստանը դարձնել կամակատար, և

[20] «Hürriyet», Istanbul, 1991, 15 Kasim.

նրա միջոցով իր կամքը թելադրել Ղարաբաղի հայությանն ու հայկական Սփյուռքին»[21]:

Թերևս նույն նպատակն էր հետապնդում նաև 2002 թ. հետո թուրքական նոր ղեկավարության կողմից առաջադրված «զրո խնդիր հարևանների հետ» քաղաքականությունը, որը չնայած ձեռնարկած կոնկրետ քայլերին, մեծ հաշվով ի զորու չեղավ որոշակի առաջընթաց գրանցել Հայաստան-Թուրքիա միջպետական հարաբերություններում:

Եվ անկախ նրանից, որ Էրդողանն պաշտպանում էր «զրո խնդիր հարևանների հետ» սկզբունքը և հանդես էր գալիս հարավկովկասյան անվտանգության համակարգ ձևավորելու նախաձեռնությամբ, այնուամենայնիվ հարկ է ընդգծել, որ Թուրքիան բոլոր ժամանակներում նախապատվությունը տալիս էր գերազանցապես Ադրբեջանի և քննարկվող ժամանակաշրջանում Վրաստանի հետ հարաբերությունների զարգացմանը: Ինչ վերաբերում է Հայաստանին, ապա Էրդողանը ՀՀ հետ հարաբերությունների կարգավորումը շարունակում էր կապել ղարաբաղյան խնդրի կարգավորման հետ: Ուստի ամենևին էլ պատահական չէր, որ ՀՀ արտգործնախարար Վ. Օսկանյանը «Անտեսված դասեր» հոդվածում ամփոփելով քննարկվող ժամանակահատվածում բոլոր հանդիպումները, այն կարծիքն է հայտնում, որ Թուրքիան ամենևին էլ ցանկություն չուներ «Հայաստանի հետ առանց նախապայմանների դիվանագիտական հարաբերություններ հաստատել կամ բացել սահմանը», քանզի «…Թուրքիան այդ ամենը» կապում էր «…միայն ու միայն Ղարաբաղի հարցի հետ»[22]:

Այն, որ ԼՂ հակամարտության կարգավորված չլինելն իրոք չէր նպաստում կայունության հաստատմանը, անվիճելի է, սակայն խնդիրն այն է, թե կարգավորում ասելով ինչ նկատի ունեին Թուրքիան և Ադրբեջանը, քանզի նրանց պատկերացմամբ կարգավորումը ենթադրում էր անկախություն հռչակած ԼՂ հանրապետության վերադարձը Ադրբեջանի կազմ: Ինքնին հասկանալի է, որ այս գնով խոսել Կովկասում կայունություն հաստատելու մասին ՀՀ-ն ուղղակի չէր կարող:

Ուստի, կարծում ենք, որ սխալված չենք լինի, եթե պնդենք, որ Թուրքիայի «զրո խնդիր հարևանների հետ» արտաքին քաղաքական

---

[21] Չաքրյան Հ., Թուրքիայի հակահայկական քաղաքականությունը՝ Անդրկովկասում ապակայունության գործոնը, // «Իրան-Նամե», արևելագիտական հանդես, հատոր 35, Եր., 2000, էջ 14:

[22] Օսկանյան Վ., Անտեսված դասեր, 02. 04. 2012, http://www.mediamax.am/am/column/12231/

կարգախոսը կոնկրետ Հայաստանի դեպքում, մեղմ ասած, այնքան էլ անկեղծ չէր, քանզի Թուրքիան, իրոք կողմնակից լինելով տարածաշրջանում կայունության ու խաղաղության հաստատմանը, այնուամենայնիվ, Հայաստանի հետ հարաբերությունների կարգավորումը շարունակում էր կապել Արցախյան խնդրի կարգավորման իր սեփական տեսլականի հետ: Իսկ ՀՀ-ի հետ հարաբերությունների հարցում թուրքական ղեկավարության որդեգրած քաղաքականության մեջ երբեմն առկայծող դրական միտումները կարելի է բացատրել Թուրքիայի զանազան շահախնդրություններով և, մասնավորապես, Եվրամիությանն անդամակցելու խնդրով: Ըստ այդմ՝ ստույգ և ամբողջական պարզաբանում են ստանում նաև Արցախյան հիմնախնդրի կարգավորման առնչությամբ Թուրքիայի ղեկավարության դիրքորոշման մեջ ժամանակ առ ժամանակ ի հայտ եկած՝ թեկուզև ոչ էական փոփոխությունների հանգեցնող տեղաշարժերը:

Այստեղից էլ գերիշխող է դառնում այն տեսակետը, որ Թուրքիայի նմանատիպ առաջարկներին լուրջ վերաբերվել չի կարելի, քանզի դրանով Թուրքիան հետապնդում է մեկ նպատակ. շեղել համաշխարհային հանրության ուշադրությունը և ցույց տալ աշխարհին, թե Թուրքիան, որպես բարի կամքի դրսևորում, շարունակում է ջանքերը ՀՀ-ի հետ հարաբերությունները կարգավորելու հարցում: Նույն նպատակին էր միտված նաև «Ֆուտբոլային դիվանագիտությամբ» սկսված հայ-թուրքական միջպետական երկխոսության և մերձեցման գործընթացը:

Արձանագրությունների բովանդակությանը ծանոթանալիս, առաջին հայացքից կարող է թվալ, թե ստորագրված արձանագրությունները կարող էին լրջորեն նպաստել երկու երկրների միջև հարաբերությունների կարգավորման և դիվանագիտական հարաբերություններ հաստատելու գործին: Սակայն, առավել ուշադիր գտնվելու դեպքում, չենք կարող չնկատել այն հանգամանքը, որ այն իր ամբողջության մեջ չէր բխում համայն հայության կենսական շահերից, քանզի արձանագրություններում առկա առանձին դրույթների և հատկապես սահմանները փոխադարձ ճանաչելու դրույթը հայկական կողմի համար միանգամայն անընդունելի էր, որի հետ համաձայնելը, փաստորեն, նշանակելու էր, որ ՀՀ ընդունում է միջազգային իրավունքի նորմերի կոպիտ խախտմամբ ստորագրված քեմալա-բոլշևիկյան 1921 թվականի հայտնի պայմանագրերը: Եվ վերջապես չէր կարելի անտեսել նաև այն հանգամանքը, որ արձանագրությունների տեքստից հստակ չէր հասկացվում, որ հենց ինքը Թուրքիան էր 1993 թվականին միակողմանիորեն փակել ՀՀ հետ սահմանը:

Այսպես, թեև 2008 թ. սեպտեմբերին Թուրքիայի նախագահի այցը Հայաստան հայ պատմագիտության մեջ դիտարկվում է որպես երկխոսության նոր փուլ Հայաստան-Թուրքիա հարաբերությունների

կարգավորման բնագավառում, այդուհանդերձ Ֆուտբոլային դիվանագիտության և դրա հիման վրա արդեն 2009 թ. օգոստոսի 31-ին ՀՀ և Թուրքիայի նախաստորագրած «Դիվանագիտական հարաբերությունների հաստատման մասին» և «Երկկողմ հարաբերությունների զարգացման մասին» արձանագրությունների[23] արդյունքի վերլուծությունը բերում է այն հետաքրքիր եզրահանգմանը, որ ՀՀ-ի նախաձեռնությամբ իրագործած նման քայլը ՀՀ-ի համար ավարտվեց անարդյունք, մինչդեռ Թուրքիան հերթական անգամ հնարավորություն ստացավ աշխարհին ցույց տալ իր «մարդասիրությունը» և ՀՀ-ի հետ հարաբերությունները կարգավորելու «բուռն ձգտումը»: Այդ մասին էր փաստում նաև 2008 թ. սեպտեմբերի 7-ին Երևանից Անկարա վերադարձած Գյուլը, երբ նշում էր. «Գնդակը մեր դաշտում էր և չպետք է այնտեղ մնար: Այդ այցով դրական նկարագիր ստեղծեցինք, դրական վարկանիշ ձեռք բերեցինք աշխարհում: Իմ այս այցը դրվատանքի է արժանանալու և դիտվելու է իբրև հանդգնության դրսևորում: Թուրքիայի համար անարդար է բացասական վարկանիշ ունենալը, իսկ ես մեծ կարևորություն եմ տալիս Թուրքիայի վարկանիշին»[24]: Ուստի Թուրքիան անկախ Հայաստանի դիրքորոշումից շարունակում էր հանդես գալ Հայաստանի հետ հարաբերություններում նախապայմանների դիրքերից և հարաբերությունների կարգավորելը վերստին կապում էր ղարաբաղյան հարցում զիջումների և այսպես կոչված՝ «տարածաշրջանում սահմանների համաժամանակյա բացման հետ»[25]: Որպես ասվածի ապացույց, ցանկանում ենք բերել այն փաստը, որ արձանագրությունների կնքման հաջորդ օրն արդեն Թուրքիայի վարչապետ Էրդողանը հանդես է գալիս նախապայման պարունակող հայտարարությամբ՝ նշելով, որ «ՀՀ-ի հետ Թուրքիայի սահմանի բացումը կապված է Ղարաբաղյան

---

[23] Արձանագրություն ՀՀ և ԹՀ միջև դիվանագիտական հարաբերություններ հաստատելու մասին, https://www.mfa.am/filemanager/bilateral/Turkey/20091013_protocol.pdf, Արձանագրություն ՀՀ և ԹՀ միջև հարաբերությունների զարգացման մասին, https://www.mfa.am/filemanager/bilateral/Turkey/20091013_protocol1.pdf

[24] Տե՛ս Արշակյան Գ., Թուրք-հայկական հարաբերությունները Հարավային Կովկասում ստեղծված նոր իրավիճակի պայմաններում, // «Հայագիտության հարցեր», թիվ 2 (8), Եր., 2016, էջ 7:

[25] Տես Հայ-թուրքական հարաբերությունների ներկան, «Հայաստանի Հանրապետություն», Եր., 2015, 3 մարտի, http://www.hhpress.am/?sub=hodv&hodv=20150303_3&flag=am&fbclid=IwAR3jFpC9uMeEkAryVIdJz1Cn7-pizvSDDhP6oDuy33x5ohBj-YhE-hW4rO8

հիմնահարցում առաջընթացի հետ», և որ իրենք ցանկանում են, «որ բոլոր սահմանները բացվեն միաժամանակ»[26]:

Պարզապես քննարկվող ժամանակաշրջանում վրաց-ռուսական «հնգօրյա պատերազմի» արդյունքում Թուրքիան ակամա հայտնվել էր տարածաշրջանային հակամարտությունների կիզակետում: Ուստի Հայաստանի հետ դիվանագիտական հարաբերությունների բացակայությունը տարածաշրջանային առաջատարի դերին հավակնող Թուրքիային թելադրում էր գոնե ժամանակավորապես հետ կանգնել նախապայմաններից[27]: Վերը նշվածի օգտին է խոսում այն ժամանակվա Թուրքիայի արտգործնախարար Ալի Բաբաջանի այն հայտարարությունը, որ «պատերազմը (նկատի ունի ռուս-վրացական պատերազմը-Մ.Ն.) ցույց տվեց, որ մենք պետք է նոր մոտեցում ցուցաբերենք Կովկասում հակամարտությունների կարգավորմանը, ներառյալ Հայաստանի պարագայում»[28]: Թուրքիայի համար ակնհայտ էր, որ «Կովկասում խաղաղության և հակամարտության կարգավորման պլատֆորմի» իր նախագիծը ենթակա էր ձախողման առանց Հայաստանի աջակցության[29]:

Անշուշտ, նման մոտեցումը պետք է ենթադրեր նաև Թուրքիայի կողմից Հայաստանի հետ հարաբերությունները կարգավորելուն ուղղված կոնկրետ քայլեր: Եթե հաշվի առնենք նաև այն հանգամանքը, որ Հայաստանն Արցախյան հակամարտության շահագրգիռ կողմ էր, ամենևին էլ պատահական չպետք է համարել այն փաստը, որ «Թուրքիան ներքաշվեց հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման դաշտ»[30]:

Ուստի չենք սխալվի եթե նշենք, որ հայ-թուրքական հարաբերությունները կարգավորելու գործընթացը Թուրքիայի կողմից հերթական անգամ օգտագործվեց՝ փորձելու միջնորդի դեր ստանձնել, այն

---

[26] Տե՛ս Գեղամյան Վ., Հայ-թուրքական հարաբերությունների 2008-2010 թթ. հետհայաց ամփոփում, 01. 02. 2011, http://www.noravank.am/img/detail.php?ELEMENT_ID=5338

[27] Տե՛ս Թորոսյան Տ., Թուրքիայի արտաքին քաղաքականության «Նոր ակտիվիզմի» երկրորդ փուլը, // «Լրաբեր Հասարակական Գիտությունների», թիվ 1-2, Եր., 2010, էջ 6-7:

[28] «Hürriyet», Istanbul, 2008, 6 Eylül.

[29] Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության Դրաստամատ Կանայանի անվան ազգային ռազմավարական հետազոտությունների ինստիտուտ, Ռազմավարական անվտանգային հետազոտություններ, հատ. 3, Եր., 2014, էջ 333:

[30] Տե՛ս Եղիազարյան Ա., Արշակյան Գ., Թուրքիայի տարածաշրջանային քաղաքականությունը ԽՍՀՄ-ի փլուզումից հետո, Եր., 2014, էջ 166:

է՝ երկրաքաղաքական ներկայություն ապահովել ղարաբաղյան հարցում: Ուստի որոշ ուսումնասիրողների շրջանում տարածված այն տեսակետը, թե իբր հայ-թուրքական հարաբերություններում Թուրքիան զգալի տեղ էր հատկացնում Ադրբեջանի շահերին իրատեսական չէ, քանզի, մեր կարծիքով, փաստերը վկայում է այն մասին, որ Թուրքիան Հարավային Կովկասի երկրների հետ գործում է իր սեփական արտաքին քաղաքականության համաձայն և չի առաջնորդվում մեկ այլ պետության, այդ թվում՝ Ադրբեջանի շահերով, այնքանով, որքանով դա չէր վնասում իր սեփական շահերին: Իսկ եթե ընդունենք անգամ, որ դա իրոք այդպես էր, ուստի միայն այն պատճառով, որ Թուրքիայի շահը տվյալ իրադրության մեջ լիովին համընկնում էր Ադրբեջանի շահերին: Քանզի Թուրքիան ի վիճակի է եղել զարգացնել խորը և համակողմանի հարաբերություններ Վրաստանի և Ադրբեջանի հետ, որոնք հաճախ ներկայացվում են որպես ռազմավարական համագործակցություն: Եվ ահա նման քաղաքական ուղեգծի օրինաչափ արդյունք է համարվում 2010թ. օգոստոսի 16-ին կնքված «Ադրբեջանի և Թուրքիայի միջև ռազմավարական գործընկերության ու փոխադարձ աջակցության մասին» համաձայնագրի հաստատումը[31], որի հիմնական դրույթների վերլուծությունը հիմք է տալիս արձանագրելու, որ «թուրք-ադրբեջանական դաշինքը ունենալով կայուն գաղափարախոսական հիմք և քաղաքական համապատասխան նախադրյալներ՝ ներկա աշխարհաքաղաքական զարգացումների համատեքստում հանդիսանում է միջազգային ուժերի հարաբերակցության հավասարակշռությունը խախտող և ազդեցությունների հաշվեկշիռը փոխելուն նպատակաուղղված ապակայունացնող գործոն՝ ներկայացնելով անմիջական սպառնալիք տարածաշրջանի կայունությանը և խաղաղությանը՝ հատկապես վտանգելով ՀՀ և ԼՂՀ ազգային անվտանգությունը»[32]: Դրա հաստատումն էր օրինակ այն փաստը, որ 2016 թ. ապրիլի 1-4 Լեռնային Ղարաբաղի և Ադրբեջանի շփման գծում ռազմական գործողությունների ժամանակ Թուրքիան հանդես եկավ հայտարարությամբ, ըստ որի ամբողջովին սատարում է Ադրբեջանին և հարկ եղած դեպքում պատրաստ է ամեն

[31] Էվոյան Լ., «Ադրբեջանի Հանրապետության և Թուրքիայի Հանրապետության միջև ռազմավարական գործընկերության և փոխադարձ օգնության մասին պայմանագիրը»՝ թուրք-ադրբեջանական երկկողմ հարաբերությունների որակապես նոր փուլի սկիզբը, 19.05.2013, https://akunq.net/am/?p=31181

[32] Տե՛ս նույն տեղում:

տեսակի օգնություն ցուցաբերելու նրան[33]: Իսկ արդեն 2017 թ. հոկտեմբերի 30-ին Թուրքիայի նախագահ Էրդողանը Բաքու այցի շրջանակներում արված հարցազրույցում նշել է. «Լեռնային Ղարաբաղի հիմնախնդիրը որքան Ադրբեջանի, այդքան էլ մեզ համար արյունահոսող վերք է: …. Մենք ցանկացած հարցում շարունակելու ենք կանգնել Ադրբեջանի կողքին»[34]: Բայց և այդպես պետք է փաստել, որ Թուրքիան այսպես վարվելով չէր ձգտում արժանանալ որևէ երկրի հավանությանը: Ուստի, մեր կարծիքով, ճիշտ կլինի, որ Թուրքիայի կողմից Հայաստանի հետ հարաբերությունների կարգավորման գործընթացում նախապայմանների առաջադրումը դիտարկվի զուտ թուրքական պետության շահերի տեսանկյունից՝ առանց Ադրբեջանին այդ պատկերի մեջ ներքաշելու անհարժեշտության: Մի բան, որը փաստել է ՀՀ նախագահ Ս. Սարգսյանը 2017 թ. փետրվարի 17-ին Մյունխենի անվտանգության համաժողովի իր ելույթում նշելով, որ Հայաստանի հետ դիվանագիտական հարաբերություններ հաստատելու հարցում «…հիմնական խոչընդոտը Թուրքիայի առաջնորդների քաղաքական կամքի բացակայությունն է»[35]: Իսկ այսօր, երբ Թուրքիան անցնում է դժվարին ժամանակահատված, որտեղ նրա ապագան առաջիկա տարիներին և եթե ոչ տասնամյակների համար որոշված չէ Թուրքիայի ղեկավարությունը առանձնապես չի շտապում զբաղվել Հայաստանի և հայկական հարցով և հայ-թուրքական հարաբերությունները մղվել են ետնաբեմ՝ առանց առաջին պլան գալու որևէ հեռանկարի: Իսկ գործընթացի նկատմամբ միջնորդները դրսևորում են անհետևողականություն՝ ճնշումներ բանեցնելու առումով: Հանգամանք, որի բացակայությունն էլ նպաստում է այսօր աշխարհում գնալով խորացվող հակամարտություններին և նորանոր պատերազմների ծնունդին:

Ցավոք պետք է փաստենք, որ ՀՀ իշխանություններին մեծամասամբ չի հաջողվել ժամանակին արձագանքել աշխարհաքաղաքական իրավիճակների փոփոխություններին, մասնավորապես Թուրքիայի ներքին

---

[33] Տե՛ս Թուրքիան որոշակի դերակատարություն է ունեցել ապրիլյան պատերազմի ժամանակ, 05.02.2017, https://galatv.am/hy/211162/

[34] Ղարաբաղի հարցը արյունահոսող վերք մեզ համար. Էրդողանը Բաքվից հայտարարություններ է անում, 30.10.2017, https://www.yerkir.am/news/view/139236.html?fbclid=IwAR3Fa1pxDGORie8JBD4KmEHHt8SFap49tLJV6r1_DM1MaxxlQ8rj4AUUVc

[35] Նախագահը մասնակցել է Մյունխենի անվտանգության համաժողովին, 17. 02. 2018, http://www.president.am/hy/press-release/item/2018/02/17/President-Serzh-Sargsyan-attended-Munich-security-conference/

կյանքում հաճախակի տեղի ունեցող տեղաշարժերին, որի հետևանքով ՀՀ արտաքին քաղաքականությունը որպես կանոն հանդես է եկել հետապնդողի դերում:

Ուստի նման մոլորությունից խուսափելու նպատակով այսօր ստեղծված իրավիճակում նոր մարտահրավերներին դիմակայելու համար հայկական կողմի խնդիրը պետք է լինի վերանայել Թուրքիայի հետ հարաբերվելու մեթոդաբանությունը, պահպանել Հայաստան-Սփյուռք-Արցախ եռամիասնությունն ու աշխարհիս հզորների կենսական շահերի բախման վայր հանդիսացող մեր տարածաշրջանում, փոխանակ հարմարվելու Թուրքիայի կողմից առաջադրվող խաղի կանոններին կամ մեղադրելու մեզ այդ հարցում այս կամ այն սխալի կամ բացթողման համար, քայլեր ձեռնարկել մեր երկիրը հզորացնելու ուղղությամբ, քանզի միայն այդ դեպքում Թուրքիան ինքը ուղիներ կորոնի Հայաստանի հետ դիվանագիտական հարաբերություններ հաստատելու համար:

Մ. Նաջարյան

Ղարաբաղյան գործոնի ազդեցությունը Հայաստան-Թուրքիա հարաբերությունների կարգավորման հարցում

Ամփոփում

Սույն հոդվածում բերված փաստական նյութերի հիման վրա փորձ է արվել ժամանակի քաղաքական զարգացումների համատեքստում վերլուծության ենթարկել Հայաստան-Թուրքիա հարաբերություններն ընդհանրապես և հայ-թուրքական հարաբերությունների ներկայիս իրավիճակը մասնավորապես՝ որպես Հայաստանի Հանրապետության առջև ծառացած լրջագույն մարտահրավեր և կարևոր հիմնախնդիր: Մեծապես կարևորվել է նաև տարբեր, մասնավորապես ղարաբաղյան գործոնի ազդեցությունն այդ հարաբերությունների կարգավորման խնդրում:

М. Наджарян

Влияние карабахского фактора на процесс урегулирования отношений между армением и турцией

Резюме

На основе представленного в данной статье фактического материала сделана попытка проанализировать отношения между Арменией и Турцией в общем и современное состояние армяно-турецких отношений в частности в

контексте политических реалий как серьезнейшего вызова и судьбоносной проблемы для Республики Армения. Особо подчеркивается определяющая роль различных факторов, в частности, карабахского, в вопросе урегулирования этих отношений.

M. Najaryan

The Impact of the Karabakh Factor on the Settlement of Armenia-Turkey Relations

Summary

Based on the factual material presented in this article, the attempts are made to analyze Armenia-Turkey relations in general and their present state in the context of the current political developments, particularly, as a key problem and a serious challenge the Republic of Armenia is facing. The influence of different factors, especially the Karabakh factor, is being greatly underlined within the scope of normalizing the relations.

Խմբագրություն է ուղարկվել 01.07.19
Հանձնարարվել է գրախոսության 08.07..19
Տպագրության է հանձնարարվել 15.10.19